

կան դրույթների ու գիտական հղբագրությունների մասին: Ընթերցողներին կողմնորոշելու համար հրատարակիչները թերևս ծանոթագրություններում կարող էին ավելի կոնկրետ ցույց տալ Գալուստ Տեր-Մկրտչյանի երկերում առանձին սխալները, վրիպումները, ինչպես և հնացած կարծիքները: Նյութի համակարգումն ակնառու դարձնելու և օգտագործման հարմարության համար լավ կլիներ, որ ժողովածուի

հիմնական բաժիններն ունենային ընդհանուր խորագրեր: Կարծում ենք տեղին չէ վերապահությունը անձնանունների ցանկում, եթե ոչ ծանոթագրություններում, ապա հեղինակի մեջբերած ձեռագրային հիշատակարաններում առկա անձնանունների նկատմամբ, մանավանդ որ դրանց թիվը մեծ չէ:

Բաճախի. գիտ. դոկտոր Հ. Մ. ԱՄԱՆՅԱՆ

ARMENIAN ART TREASURES OF JERUSALEM, *Edited by Bezalel Narkiss, In collaboration with Michael E. Stone, Historical survey by Avedis K. Sanjian*, Massada Press, 1979, 176 pp., 194 ill.

ԵՐՈՒՍԱԴԵՄԻ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ԳԱՆՁԵՐԸ, խմբագրությամբ Բեզալել Նարկիսի, Մայքլ Ե. Սթոնի համագործակցությամբ, պատմական ուսումնասիրությունը Ավետիս Կ. Սանջյանի, Մասսադա հրատարակչություն, 1979, 176 էջ, 194 նկար:

Դարերի ընթացքում Երուսաղեմում ապրող հայերը կառուցել են բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, որոնցից շատերը կործանվել են կամ վերաշինվել:

Հանրահռչակ Ս. Հակոբյանց կաթողիկոս տաճարը կառուցվել է 1142—1165 թթ. ընթացքում՝ խաչակրաց տիրապետության օրոք: Այժմ տաճարը ուշ եվրոպական շքեղ բարոկկոյի և հայկական ավանդական ճարտարապետության մի յուրօրինակ խառնուրդ է: Հայ մշակույթի համար խոշոր նշանակություն ունեն վանքի գանձատանը պահվող գեղարվեստական բազմազան ստեղծագործությունները և գրադարանի ձեռագրական հավաքածուն: Հարյուրամյակներ շարունակ Երուսաղեմ այցելած ուխտավորները Ս. Հակոբյանց վանքին են ընծայել ամենատարբեր իրեր. այդ նվիրատվություններից գոյացել է թանգարանային մի հսկա հարստություն: Ինչպես հայտնի է վանքի գրադարանի հայերեն գրչադիր մատյանների հավաքածուն իր մեծությամբ և կարևորությամբ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանից հետո երկրորդն է աշխարհում:

Երուսաղեմի Ս. Հակոբյանց հայկական վանքի թանգարանային արժեքների մասին տարբեր աղբյուրներով գրել են Գ. Հովսեփյանը, Ա. Բաումշտարկը, Գ. Միլլեն, Ս. Տեր-Ներսիսյանը, Զ. Քարսունը, Տ. Ա. Իզմայլովան և ուրիշներ:

1969 թ. բրյուսելյանակ եգիպտագետ Ա. Մխիթարյանի աշխատասիրությամբ Երուսաղեմում հրատարակվեց այնտեղ բացված հայկական ցուցահանդեսի կատալոգը, որտեղ առաջին անգամ նկարագրվեցին և գունավոր ու սև-սպիտակ վերատպություններով գիտական շրջանա-

ռության մեջ դրվեցին հայ արվեստի մի շարք նշանավոր ստեղծագործություններ:

Այս ուղղությամբ հաջորդ կարևոր քայլը եղավ անվանի գիտնական, ՀՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ Ս. Տեր-Ներսիսյանի «Հայ արվեստը ակունքներից մինչև XVII դարը» աշխատությունը, որը հրատարակվեց Փարիզում 1977, 1978 թթ. ֆրանսերեն և անգլերեն լեզուներով: Այդ երկասիրության մեջ առաջին անգամ հետազոտված էին Երուսաղեմում գտնվող հայկական ձեռագրերի մոտ երեսուն նվազ հայտնի կամ բոլորովին անհայտ մանրանկարներ:

1979 թ. Հոլանդիայում Մասսադա հրատարակչությունը անգլերեն լեզվով լույս է ընծայել նշանավոր արվեստագետ Բեզալել Նարկիսի «Երուսաղեմի հայկական արվեստի գանձերը» գիրքը, որտեղ ներկայացված են հայ մշակույթի բազմաթիվ անգին մասունքներ: Դիրքը ձեռնված է Ս. Տեր-Ներսիսյանին, առանց որի ուսումնասիրությունների, ինչպես նշում է հեղինակը, խնդրո առարկա աշխատությունը չէր կարող գրվել: Երկասիրության սկզբում զետեղված է Լոս Անջելոսի Կալիֆոռնիայի համալսարանի հայկական հետազոտությունների բաժնի պրոֆեսոր Ա. Սանջյանի համառոտ ակնարկը «Երուսաղեմի հայկական համայնքը» խորագրով: Այստեղ սեղմ կերպով պատմվում է դարերի ընթացքում Երուսաղեմյանակ հայերի և բյուզանդացիների, արաբների, խաչակիրների, թուրքերի հարաբերությունների մասին՝ վերջիններիս գերիշխանության օրոք:

Ա. Սանջյանի ակնարկում թուուցիկ կերպով մատնանշվում է հայերի մշակութային, մաս-

նավորապես շինարարական գործունեությունը Երուսաղեմում, շարադրվում է տեղի հայկական ուսումնական հաստատությունների պատմությունը, ներկայացվում են 1833 թ. ստեղծված տպարանն ու նրա իրականացրած կարևոր հրատարակությունները:

Բ. Նարկիզի ուսումնասիրության հիմնական գլուխները վերնագրված են՝ «Խճանկար հատակներ», «Վաղ շրջանի պատկերազարդ ձեռագրեր», «Նկարազարդ մատյանները Կիլիկիայի թագավորության մեջ», «Տասներեքերորդ դարի ծաղկված ձեռագրերը Կիլիկիայում», «Տասներեքերորդ և տասնչորսերորդ դարերի նկարազարդ մատյանները Մեծ Հայաստանում», «Տասնչորսերորդ դարի կիլիկյան մանրանկարությունը», «Ուշ շրջանի հայկական ձեռագրերի ձևավորումը», «Հայկական տպագիր գրքերը և հետագա շրջանի մանրանկարչությունը», «Ս. Հակոբյանց կաթողիկե տաճարը և նրա գանձերը»:

Բացում ես գիրքը, և կարծես հայտնվում ես մի թանգարանում, որտեղ ցուցադրվում են տարբեր դարերի նվիրական հիշատակներ: Ահա Երուսաղեմում գտնվող հայկական խճանկարները: Ինչպես հայտնի է, հայ արվեստում գեղանկարչության այդ տեսակը մեծ դարգացում չի ստացել, ուստի Հայաստանից դուրս ստեղծված հուշարձանների ուսումնասիրությունը մեծ կարևորություն ունի հայ մշակույթի պատմության համար: Երեք հայկական խճանկարներից առաջինը, որը և հնագույնն է, այսպես կոչված Արտավանի խճանկարը, ըստ Բ. Նարկիզի թվագրվում է V դարի կեսով: Արտավանի պատկերի նման Զիթենյաց լեռան վրա է գտնվում Բ. Նարկիզի կարծիքով V դարին վերաբերող մի այլ խճանկար: Այն ներկայումս պարզարում է Երուսաղեմի ոռոսական վանքի մատուռներից մեկը, մինչդեռ Արտավանի խճանկարը պահպանվում է հայկական վանքի հնագիտական թանգարանում: Դամասկոսի Դոան մոտ գտնվող Ս. Պողիկտոսի մատուռում հայտնաբերված երրորդ խճանկարը Բ. Նարկիզի համոզմամբ ստեղծվել է VI դարի կեսին: Մյուս երկու խճանկարների նման սա ևս ունի հայերեն արձանագրություն: Հեղինակը ուշագրավ ընդհանրություններ է տեսնում այս և հռոմեական ու հրեական նույն ժամանակի խճանկարների միջև: Նա նշում է հարևան ժողովուրդների վարպետների և հայ արվեստագետների օգտագործած տեխնիկայի, նախագծերի, մոտիվների ու պատկերազրույթյան նմանությունը:

Դրքի երկրորդ գլխում հեղինակը հետազոտում է Երուսաղեմում պահվող հնագույն հայկական մանրանկարները: Դրադարանի գանձերից մեկի՝ կիլիկյան նշանավոր նկարիչ Սար-

գիս Պիծակի ծաղկած 1312 թ. ավետարանի մեջ կարված է X դարի վերջի ձեռագրի մի էջ, որի մանրանկարչությունը համարվում է հավաքածուի հնագույն նկարազարդ օրինակը: Զեռագրի էջում «Ս» մեծատառի մեջ պատկերված է քաղաք անձնավորող հեթանոսական աստվածուհին՝ առատության եղջյուրները բռնած: Բ. Նարկիզը գտնում է, որ գեղարվեստական իր առանձնահատկություններով մանրանկարը մոտենում է էջմիածնի ավետարանի (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2374) 989 թ. պատկերազարդումներին: Իր ձևավորման թե՛ ծրագրով և թե՛ պատկերազրույթյամբ այս նույն ձեռագրին է առնչվում Երուսաղեմյան մեկ այլ մատյան՝ այսպես կոչված «Երկրորդ էջմիածնի ավետարանը» (X դարի վերջ կամ XI դարի սկիզբ): Բ. Նարկիզը նշում է, որ երկու հուշարձանները խիստ տարբեր են ոճով և, բացառելով երկու ձեռագրերի միջև որպես ուղղակի կապ, նրանց մանրանկարների աղբյուրները բացատրում է ընդհանուր նախօրինակի օգտագործմամբ:

Երուսաղեմյան շքեղ ստեղծագործություններից է Կարսի Դագիկ թագավորի պատվիրած ավետարանը: Գիտնականի կարծիքով այս մատյանի մանրանկարների համար որպես նախատիպեր են ծառայել Բարսեղ II կայսեր կոստանդնուպոլսյան Հայսմալուրքի (1000 թ.) նկարազարդումները: Ըստ հեղինակի երկու հուշարձանների նմանությունը վկայում է հայկական ձեռագրի՝ վաղ շրջանի աշխատանք լինելու մասին: Ընծայական մակագրությունները, որտեղ Դագիկը հիշվում է իրրե Շանշահ և նրա ընտանիքի նկարը՝ դեռևս երիտասարդ դստեր՝ Մարեմի հետ, Բ. Նարկիզին թույլ են տալիս ենթադրել, որ Կարսի ավետարանը ստեղծվել է XI դարի կեսին, այսինքն մինչև Դագիկ արքայի գահից հրաժարվելը (1064 թ.):

Այս բաժնում քննված են նաև Մալաթիայի XI դարի ձեռագրերը: Բ. Նարկիզը գտնում է, որ դրանք բոլորը մի նախօրինակից են ծագել: Նա թուցիկ ձևով ներկայացնում է Երուսաղեմում պահվող 1041 թ. և 1064 թ. ավետարանները, հատկապես անդրադառնալով դրանց ձևավորման մեջ Մալաթիայի մանրանկարչությանը բնորոշ ձևերին:

Անհրաժեշտ է նշել, որ Կարսի ավետարանի ու Մալաթիայի երկու ձեռագրերի ուսումնասիրությամբ պրաղվել է նաև Լենինգրադի էրմիտաժի աշխատակից, արվեստագիտության դոկտոր Տ. Ա. Իդմայլովան: 1979 թ. Մոսկվայում ոռոսերեն լեզվով հրատարակված՝ XI դարի հայ գրքարվեստին վերաբերող մենագրության մեջ նա մանրամասնորեն հետազոտել է Երուսաղեմյան հիշյալ ձեռագրերի մանրանկարները: Նրա-

մենագրությունը, ինչպես նաև Ս. Տեր-Ներսեսյանի՝ «Հայ արվեստը ակունքներից մինչև XVII դարը» աշխատության՝ XI դրի մանրանկարչությանը նվիրված հատվածները, Ի. Նարկիզի ուսումնասիրության հետ միասին, գալիս են լրացնելու XI դարի գրքարվեստի մասին մեր իմացությունը:

Բ. Նարկիզի գրքի երրորդ գլխում տրված է XII դարի քիչ հետազոտված ձեռագրերից մեկի՝ Թեոդորոս նկարչի ծաղկած ավետարանի մանրանկարների քննությունը: Ուսումնասիրողի դիտողությունները այս մատյանի մասին ըստ ամենայնի ղեկավարելու համար անհրաժեշտ է հիշել, որ XII դարից սլահականված թեմատիկ նկարազարդումներով ձեռագրերը շատ սակավաթիվ են, իսկ Թեոդորոսի ավետարանը ճիշտ այդօրինակ եզակի գրչագիր մատյաններից է:

Աշխատության չորրորդ գլուխը նվիրված է Թորոս Ռոսլինի արվեստին: Ինչպես հայտնի է, նրա վրձնած յոթ ստորագիր մատյաններից երուսաղեմում են հանգրվանել չորսը¹: Բ. Նարկիզը ժամանակագրական հերթականությամբ ուսումնասիրում է այդ մասունքները: Նա մեկ առ մեկ վերլուծում է ռոսլինյան ձեռագրումների տարբեր մասերի՝ խորանների, մարգարեների, ավետարանիչների դիմանկարների, թեմատիկ տեսարանների կերտման սկզբունքներն ու յուրահատկությունները, մատնանշում հայ գրքարվեստի նախընթաց շրջանի նվաճումների Ռոսլինի իմացությունը և նրա բերած նորամուծությունները, բյուզանդական մանրանկարչության հետ ունեցած աղերսները և այլն: Ս. Տեր-Ներսեսյանի վերջին տարիների աշխատություններից հետո Թորոս Ռոսլինի արվեստի վերաբերյալ Բ. Նարկիզի ուսումնասիրությունը արժեքավոր ներդրում է մեծ վարպետի գեղարվեստական ժառանգության հետազոտման գործում:

Գրքի հինգերորդ գլխում հեղինակի ուշադրության առարկան են դարձել 1269 թ. կիլիկյան լեոն III արքայի թագադրության առթիվ նրա տիկնոջ՝ Կեոան թագուհու պատվերով 1272 թ. Սիսում ընդօրինակված ավետարանի, Հեթում I արքայի եղբոր՝ Վասակ իշխանի պատվիրած ավետարանի (XIII դարի 70-ական թթ.) և 1269—1270 թթ. Երզնկայում Մխիթար, Հա-

կոբ և Մովսես գրիչների համագործակցությամբ ընդօրինակված առաջին պատկերազարդ աստվածաշնչի մանրանկարները: Դժբախտաբար առաջին հրկու ձեռագրերի նկարազարդողները հայտնի չեն: Երրորդ ձեռագրի ծաղկողն է համարվում Մխիթար գրիչը: Որոշ գիտնականների համոզմամբ Կեոանի ավետարանի հիասքանչ ձեռագրումների հեղինակը Ռոսլինի աշակերտն է, ըստ որում՝ մեծանուն ուսուցչին գերազանցած աշակերտը Բ. Նարկիզի կարծիքով այս մատյանը և Վասակ իշխանի ավետարանը նկարազարդված են նույն վարպետի ձեռքով, տարբեր, բայց մոտ ժամանակներում: Երզնկայի աստվածաշնչի մանրանկարների քննության իմաստով հատկապես ղեկավարելի են Բ. Նարկիզի կողմից արված համեմատությունները բյուզանդական, դպտական, ասորական և արևմտյան համանման ստեղծագործությունների հետ:

Գրքի վեցերորդ գլխում հիշարժան է Գլաձորի անվանի նկարիչ Թորոս Տարոնացուն վերաբերող հատվածը: Բ. Նարկիզը, իր իսկ խոսքերով ասած, «մեծ տաղանդի ու երեսկայության տեր» վարպետին է համարում 1321 թ. երուսաղեմյան ձեռագրի նկարազարդողը: 1331 թ. մատյանի մանրանկարների հեղինակը, ըստ Բ. Նարկիզի, ոչ թե Թորոս Տարոնացին է, այլ նրա ժամանակակից նույնանուն մի ուրիշ նկարիչ՝ Թորոս Մարկավազը, որի 1311 թ. ձեռագրում նշանավոր ձեռագրի էջերը ցրված են աշխարհի տարբեր գրադարաններում ու թանգարաններում (Դուբլինի Չեսթեր Բիթի գրադարան, Թավրիզի Մելիք-Թանգյան թանգարան, աշխարհահռչակ արվեստաբան Բեռնարդ Բերենսոնի հավաքածու Ֆլորենցիայում, Փրինսթոնի համալսարանի գրադարան, Նյույորք-բարնակ Հ. Հազարյանի հավաքածու, Հ. Քյուրտյանի հավաքածու Վիլիտայում): Գիտնականը Թորոս Մարկավազին է վերագրում նաև 1299 թ. Կիլիկիայում Վարդան գրիչի ընդօրինակած մատյանի տիտղոսաթերթի մանրանկարչությունը:

Գրքի յոթերորդ բաժնում հեղինակը քննության է առնում Սարգիս Պիծակի ծաղկած և ներկայումս Երուսաղեմում պահվող չորս մատյանները, բնորոշելով անվանի վարպետի աշխատանքանակի ոճական ու պատկերազարդական առանձնահատկությունները:

Աշխատության ութերորդ գլուխը վերաբերում է XV—XVII դդ. գրքարվեստին: Հիշարժան է, որ Երուսաղեմի հավաքածուն հարուստ է հատկապես այս շրջանում ծաղկված ձեռագրերով: Ի. Նարկիզը ուսումնասիրում է 1428—1430 թթ. Կաֆայում (Ղրիմ) Թադևոս Ավրամենցի ընդօրինակած ու ձեռագրած Հառանց վարքի որոշ էջերը և ցույց է տալիս, որ

¹ Մինչև վերջերս Երուսաղեմում էր գտնվում Թորոս Ռոսլինի ծաղկած մի ձեռագիրը ևս՝ 1268 թ. ավետարանը: 1975 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կամքով Երուսաղեմի պատրիարք, արքեպիսկոպոս Նղիշ Տերտերյանը այդ մատյանը նվիրաբերեց Մաշտոցի անվան Մատենադարանին:

դրիմյան ձեռագիրը նախօրինակ է դարձել ուրիշ վարպետների համար: Այստեղ հետազոտվում են հիշյալ մատյանի հիման վրա ստեղծված. Երուսաղեմում պահվող երկու ձեռագրերի պատկերազարդումները:

Բ. Նարկիզը մի քանի էջ է նվիրում Բիթլիսի մոտ գտնվող Խիզան քաղաքի ու Վանի մանրանկարչական դպրոցների պատկերազարդական ավանդույթներին: Գրքի առավել հետաքրքրական հատվածներից են մանրանկարիչ Սարգիս Խիզանցու գերդաստանին վերաբերող մասերը: Նկարչական այդ ընտանիքի երեք սերունդներին ներկայացուցիչները և նրանց աշակերտները մի հոյակապ գեղարվեստական ժառանգություն են թողել XVI—XVII դդ. հայ գրքարվեստի պատմության մեջ:

Մեծ կարևորություն ունեն աշխատության մեջ հայկական ու արևմտյան գեղարվեստական առնչությունների քիչ ուսումնասիրված փաստերը լուսարանող հատվածները: Բ. Նարկիզը գրում է, որ Նոր Զուղայի մանրանկարիչները երկու տիպի աստվածաշնչական օրինակներից էին ընտրում իրենց նախատիպերը: Առաջին տիպի մեջ հանդիպող եվրոպական նկարները ստեղծված էին գերմանական նշանավոր նկարիչ Ալբրեխտ Դյուրերի և նրա հետևորդների փորագրությունների հիման վրա: Բայց երկրորդ տիպի աստվածաշնչական պատկերազարդությունը կապված էր Ֆլանդրիայում և Գերմանիայում ստեղծագործած հայտնի փորագրիչ Ժան Թեոդոր Դե Բրայի նկարների հետ:

Ուսումնասիրության իններորդ գլխում Բ. Նարկիզը պատմում է հայկական առաջին տպագիր գրքերի, Երուսաղեմում գտնվող վենետիկյան և ամստերդամյան հրատարակությունների, ինչպես նաև Կ. Պոլսի XVII դարի որոշ նկարազարդ ձեռագրերի մասին:

Գրքի վերջին տասներորդ գլխում հեղինակը շարադրում է Ս. Հակոբյանց կաթողիկոս տաճարի հետ կապված ավանդությունները, քննում այդ կոթողի ճարտարապետական կառուցվածքի, ուշ շրջանում կատարված բարենորոգումների, Գրիգոր Շղթայակերի օրոք տաճարի ձևավորման ճոխացման ու հարստացման պատմությունը:

Ուսումնասիրողը այստեղ ներկայացնում է որոշ շքեղ վարազույրներ ու արծաթագործության մի շարք անգին նմուշներ, նկարազարդվածքի սյուսերը զարդարող սալիկները, որոնք Կոստինայի (Քյոթահիայի) XVIII դարի հայկական հախճապակու արտադրության փայլուն օրինակներ են:

Բ. Նարկիզի ոչ բոլոր դիտողություններն են, անշուշտ, անառարկելի և անվիճելի, բայց այդ

հանգամանքը չի նվազեցնում նրա աշխատության արժեքը:

Իր տեսակի մեջ հազվագյուտ հետազոտություն է նաև անվանի հայագետ Մ. Սթոնի կազմած կատալոգը, որով եզրափակվում է գիրքը: Այստեղ հակիրճ նկարազարդվում են այն հուշարձանները, որոնց վերատպությունները հանդիպում են գրքում: Ընթերցողի տրամադրության տակ են դրվում ստեղծագործությունների մասին ամենաանհրաժեշտ տվյալները և այն դրականությունը, որտեղ հիշատակվել են այդ արձանները:

Այս գիրքը, արտասահմանյան ուրիշ հրատարակությունների նման, հնարավոր է, որ լույս ընծայվի այլ լեզուներով ևս: Աշխատության հետագա հրատարակությունները առավել անթերի տեսնելու նպատակով կկամենայինք հեղինակների ուղադրությունը հրավիրել որոշ փաստերի վրա:

Թեոդորոսի ավետարանի կապակցությամբ, իբրև ավելի վաղ ստեղծված աշխատանքներ նշվում են Տյուրինգենի համալսարանի 1113 թ. հայկական ավետարանի, Մաշտոցի անվ. Մատենադարանի № 7737 ձեռագրի և Սեբաստիայի 1066 թ. ավետարանի ձևավորումները (էջ 42): Բանասեր Հ. Քյուրտյանը ցույց է տվել, որ Տյուրինգենի ավետարանի մանրանկարչությունը՝ նրա հիշատակարանի վրա հենվելով 1113 թ. թմագրելը ճիշտ չէ, որովհետև հիշատակարանը վերաբերում է մեկ այլ ձեռագրի: Նույն պատճառով նա գտնում է, որ սխալ է նաև Տյուրինգենի ավետարանը Դրաղարկի գրչակենտրոնին վերագրելը: Հ. Քյուրտյանի կարծիքով № 7737 ձեռագիրը ստեղծվել է Սյունիքում XIII դարի առաջին կեսին և մի քանի տասնամյակ անց, նրան հետևելով, գրվել ու ծաղկվել է Տյուրինգենի ավետարանը²:

Սեբաստիայի 1066 թ. ավետարանի նկարազարդումների ժամանակի մասին հավանական է թվում Տ. Ա. Իզմայլովայի կարծիքը: Հստակ նրա, ձեռագրի մանրանկարները կատարվել են XII դարի վերջին և ոչ թե 1066 թ., ինչպես համարում են մյուս ուսումնասիրողները³:

2 Հ. Քյուրտյան, Տյուրինգենի համալսարանին ավետարանը և իր 1113-են կարծեցյալ հիշատակարանը, «Հանդես ամսօրյա», 1968, № 4—6, էջ 157—164:

3 Т. А. Измайлова, Рецензия на книгу Л. Р. Азаряна, «Византийский временник», т. 28, 1968, էջ 277; նույնի՝ О связях армянской миниатюрной живописи с искусством Иерусалимского королевства (Рукопись Матенадарана, № 2589).

Բ. Նարեկիզը գրում է, որ 1334 թ. արծաթե կաղմը մեզ հայտնի հնազույն հայկական արծաթե կաղմն է (էջ 172, ծանոթ. 18): Այստեղ ինչ-որ շփոթություն կա: Բանն այն է, որ պահպանվել են 1254 թ. Ստեփանոս եպիսկոպոսի պատվիրած արծաթե կաղմը (Անթիլիաս, Կիրիկիայի կաթողիկոսարանի հավաքածու, № 1) և 1256 թ. Կոստանդին կաթողիկոսի պատվիրած ու Թորոս Ռոսլինի ծաղկած ձեռագրի (Ստամբուլ, հայկական պատրիարքարան) կաղմից մնացած խաչը պատկերներով: Իր կատալոգի մեջ Մ. Սթոնը իրավացիորեն նշում է, որ

1334 թ. կաղմը Երուսաղեմի պատրիարքարանի հնագույն մետաղե կաղմն է:

Այս գրքով փաստորեն մեր առջև բացվում է գեղարվեստական սքանչելիքներով հարուստ մի աշխարհ, վերականգնվում են հայ ստեղծագործ մտքի ժամանակագրական շղթայի բաղաձայն անհայտ օղակներ, հնարավորություն է ընձեռվում հիանալու մայր երկրից դուրս գտնվող մշակութային հարստությանը: Ակնհայտ է, որ միայն այսօրինակ հավաքածուներին վերաբերող աշխատություններով կարող է լրացվել հայ արվեստի պատմության ամբողջական պատկերը:

Լ. Բ. ԶՈՒԳԱՍՉԱՆ

М. У. ХАМОЯН, *Курдско-русский фразеологический словарь*, Изд-во АН АрмССР, Ереван, 1979

Выход в свет курдско-русского словаря М. У. Хамояна, первого курдского фразеологического словаря, безусловно является важным событием в советском курдоведении и—шире—в советской иранистике. Вместе с тем он вносит некоторые важные новые моменты в теорию и практику советской фразеологии в целом. Значение этого словаря определяется той исключительно важной ролью, которую фразеология играет в системе развивающихся национальных языков, являясь одним из необходимых, существенных средств выражения мысли. Не случайно фразеология как раздел языкознания играет такую важную роль в современной языковедческой науке и разработке ее проблем посвящаются многочисленные форумы ученых (изпр., конференции и симпозиумы в Туле, Ростове-на-Дону, Новгороде, Самарканде). Эти проблемы связаны с исследованием фразеологии и вширь и вглубь: углублением фразеологической тематики, с одной стороны,

и привлечением нового языкового материала,—с другой.

Самый размах исследовательской деятельности в области фразеологии требует развития и усовершенствования фразеологии, охвата фразеологическими словарями более широкого круга многочисленных национальных языков Советского Союза, в том числе младописьменных и развивающихся. За последние годы появился ряд фразеологических словарей национальных языков, но они далеко не удовлетворяют потребностей фразеологии в такого рода трудах. Значительное число языков еще не охвачено фразеологическими словарями, во-первых, а некоторые вышедшие до сих пор в свет словари не отвечают высоким требованиям научности, во-вторых; они нередко не строятся на теоретической основе современных достижений фразеологической науки.

В области иранистики пока еще, к сожалению, сделано в этом отношении очень мало. Здесь вышел в свет только таджикский фразеологический словарь Фазылова, кроме того, значительный фразеологический материал заключает в себе персидско-русский словарь под редакцией Ю. А. Рубинчика. Однако словарь Фазылова—первый в таджикской фразеологии—является однопольным словарем и, вместе с тем, он не дает еще достаточно полного представления о фразеологии таджикского языка как особой системе.

«II Международный симпозиум по грузинскому искусству», Тбилиси, 1977, էջ 5; նույնի՝ Армянская миниатюра XI в., М., 1979, էջ 288, ծան. 49:

4 Գ. Հոգևեպիստ, Բարձրաբերդի ավետարանի ոսկերչական կաղմը, «Պայքար», նոր տարվա բացառիկ, 1951, էջ 250—255; Ա. Յ. Կակովկին, Памятники художественного серебра Киликийской Армении. «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 2, էջ 193—200: